

Հաշվետվություն

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանության ապահովումը Հայաստանում» թեմայով շարունակական ուսուցման

2002 թ-ի հունիսի 29-ից մինչև 2002 թ-ի նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի համար¹

Նախնական տեղեկություններ

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանության ապահովումը Հայաստանում» թեմայով շարունակական ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ «Ուսուցանողների վերապատրաստում») իրականացվել է «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանության ապահովումը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» թեմայով «Ուսուցանողների վերապատրաստում» ծրագրի իրականացման արդյունքում, որը նախաձեռնվել և իրականացվել է բրիտանական արևելք-արևմուտք կազմակերպության կողմից (այսուհետ՝ «ԲԱԱԿ»): «Ուսուցանողների վերապատրաստում» ծրագրի ընթացքում Նարինե Գասպարյանը և Արայիկ Ղազարյանը, երկու ավագ ուսուցանողներ Հայաստանից, 2002 թ-ի գարնանը վերապատրաստվել են ԲԱԱԿ-ի մասնագետների կողմից: 2002 թ-ի հունիս դեկտեմբեր ամիսների ընթացքում ավագ ուսուցանողները Հայաստանում անցկացրել են 2 երկարաժամկետ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդ իրավաբանների, փաստաբանների և իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար, որը իրականացվել է «Ուսուցանողների վերապատրաստում Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում: Սույն հաշվետվությունը անդրադառնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ «ՄԻԵԿ») վերաբերյալ 2002 թ-ի հունիսի 29-ից մինչև օգոստոսի 30-ը իրավաբանների համար իրականացված սեմինարների շարքի մեթոդներին, շրջանակին, ինչպես նաև ժամկետներին ու կանոններին:

Սեմինարների օտերը և թեմաները

Սեմինարի օրը

Սեմինարի թեման

2002թ. հունիսի 29,

Նախաբան, ՄԻԵԿ-ի գործողությունն ու 2-րդ հոդվածը

¹ Սույն հաշվետվության թարգմանությունը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով: Իրավական ուղեցույցը, Ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության և կատարած ներդրումների համար, ցանկանում է երախտիքի խոսք ասել սույն հաշվետվության թարգմանիչ, Իրավական ուղեցույցի փորձնակ Հայկուհի Մուրադյանին ([Այստեղ տեղադրված են տեղեկություններ Հայկուհի Մուրադյանի և Իրավական ուղեցույցի այլ փորձնակների մասին](#)):

Թարգմանությունն ու մասնագիտական խմբագրությունը՝ «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության փորձնակ Հայկուհի Մուրադյանի:

2002թ. հունիսի 5	Չողված 3, խոշտանգումների արգելում
2002թ. հունիսի 12	Չողված 5, ազատության և անձնական անձեռնամխելիության իրավունք
2002թ. հունիսի 19	Չողված 6 –ի 1-ին և 2-րդ կետոր, արդար դատաքննության իրավունք
2002թ. հունիսի 26	Չողված 6-ի 3-րդ կետ, արդար դատաքննության իրավունք
2002թ. օգոստոսի 2	Չողված 8, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
2002թ. օգոստոսի 9	Չողված 10, արտահայտվելու ազատության իրավունք
2002թ. օգոստոսի 1	Գործերի ընդունելիության վերաբերյալ հարցեր
2002թ. հոկտեմբերի 31	Չողված 10-ը և զրպատությունը
2002թ. նոյեմբերի 15	Չողված 9, մտքի, խղճի և կրոնի ազատություն
2002թ. դեկտեմբերի 9	ՄԻԵԿ-ի Առաջին արձանագրության 1-ին հոդված, Սեփականության պաշտպանություն

Վերապատրաստում անցնողները

Չետկյալ անձինք հաճախել են սեմինարներին և սեմինարներից հետո ստացել են «Աջակցող ուսուցանողներ»-ի կարգավիճակ.

1. Սահակյան Ալիկ - Չայատանի Չանրապետության փաստաբանների միության փաստաբան
2. Աղաջանյան Էդուարդ- Փաստաբանների միջազգային միության փաստաբան
3. Բաբկեն Սահրադյան- Չայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցեացիայի անդամ, Չայաստանի Չանրապետության փաստաբանների միության փաստաբան
4. Սարգիս Կնյազյան- Գյումրիից ներկայացուցիչ, ուսանող
5. Արսեն Ապրոյան- Իրավաբան, Գավառի պետական համալսարանի դասախոս

- 6. Արտակ խաչատրյան- Հայստանում Ամերիկյան համալսարանի Իրավունքի ակունքի անդամ
- 7. Ռոբերտ Աթաբեկյան- Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի անդամ
- 8. Լևոն Բաղդասարյան- Հայաստանի փաստաբանների միջազգային միության անդամ

Ղիտորդները

Չեռևյալ անծիւք հաճախել են սեմինարներին, որպես ղիտորդներ.

Շաքե Սանուկյան – Համեմատական իրավագիտության կենտրոն
 Էդուարդ Մելքոնյան - Համեմատական իրավագիտության կենտրոն
 Լուսինե Բաքունյան – Փաստաբանների միջազգային միություն

Մեթոդը

Յուրաքանչյուր դասընթաց տևել է 3 ժամ, 3 տաս րոպեանոց ընդմիջումներով: Սեմինարի առաջին մասում Նարինե Գասպարյանը և Արա Ղազարյանը ներկայացրել են տեսական հարցեր և կարգավորումներ, իսկ սեմինարի երկրորդ մասի ժամանակ իրականացվել են դատախաղեր և գործերի ուսումնասիրություններ:

Սեմինարների հիմնական շեշտադրումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «ՄԻԵԴ») կամ «Եվրոպական դատարան») կողմից կայացրած վճիռների, ՄԻԵԿ-ի նորմերի, և համապատասխան ներպետական օրենսդրության համեմատական վերլուծության վրա էր դրված: ՄԻԵԿ-ի վճիռների համառոտագրերը տեսական հարցերի և կարգավորումների ներկայացումը դարձնում էին «կենդանի» և առավել արդյունավետ: Յուրաքանչյուր դասընթացի ժամանակ 5-ից 10 վճիռների համառոտագրեր էին օգտագործվում սեմինարների մասնակիցների համար:

Յուրաքանչյուր սեմինարի երկրորդ մասը, այսինքն դատախաղներն ու կիրառվող ինտերակտիվ այլ մեթոդներով ուսուցումը, անցկացվել է Լենդոնում կայացած Ուսուցանողների վերապատրաստման ժամանակ կիրառված մեթոդներին համապատասխան: Բացառություն էին կազմում միայն 2 դեպքեր, որտեղ ուսուցանողները նախընտրել են կիրառել տեղական կազմակերպությունների կողմից հայերեն թարգմանված գործեր: Յուրաքանչյուր գործի քննարկման համար մասնակիցները բաժանվում էին 3 խմբերի: Այնուհետև խմբերի կազմը փոխվում էր հերթական գործի քննարկման համար:

Ի հավելումն նշված նյութերի ուսուցանողները մշակում էին հավելյալ նյութեր ՄԻԵԿ-ի յուրաքանչյուր ուսումնասիրվող հոդվածի վերաբերյալ: Թրեյնինգների նյութերը ներառում էին քննարկված հարցերի համառոտ բովանդակություն (թեզիս)՝ նշելով համապատասխան գործերով վճիռների անունները և Եվրախորհրդի համակարգում մարդու իրավունքների զարգացման ղինամիկան:

Ուսուցանողները մասնակիցների համար անցկացրել են նաև կարճատև համակարգչային թրեյնինգներ, որպեսզի վերջիններս կարողանան Եվրախորհրդի և այլ ինտերնետային կայքերից փնտրեն և գտնեն նյութեր, որոնք պարունակում

են գործերի համառոտագրեր և Եվրոպական Դատարանի կողմից կայացրած վճիռների թարգմանություններ:

Նյութեր ընթերցանության համար

Ներքոհիշյալ նյութերը օգտագործվել են սեմինարների ընթացքում և տրամադրվել մասնակիցներին.

- Ս ԲԱԱԿ-ի կողմից տրամադրված հիմնական ձեռնարկը: Ուսուցանողները պատճենահանել են ևս 12 լրացուցիչ օրինակ:
- Ս ՄԻԵԴ-ի կողմից կայացրած անգլերեն լեզվով վճիռներ:
- Ս Յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսված 5-ից 10 գործերի համառոտագրեր: Դրանք ներկայացվել են տեսական հարցերի և կարգավորումների հետ մեկտեղ:
- Ս Մեկ էջանոց համառոտ նյութ (կոնսպեկտ) քննարկվող հարցի վերաբերյալ, որն իր մեջ ներառում է համապատասխան գործով վճռի մասին տվյալներ: Նյութերը պատճենահանվել են և տրամադրվել յուրաքանչյուր դասընթացի ժամանակ:
- Ս Հայերենով թարգմանված ՄԻԵԴ-ի կողմից կայացրած վճիռների ժողովածուն (Ծրագիրը իրականացվել է Հայաստանի Միջազգային Իրավունքի Ասոցիացիայի կողմից): Ժողովածուն իր մեջ պարունակում է Եվրոպական Դատարանի 45 առանցքային վճիռների թարգմանությունները այն բոլոր հոդվածների խախտումների վերաբերյալ, որոնք քննարկվել են սեմինարների ընթացքում: Այս գործերից մի քանիսը ներառված էին հիմնական ձեռնարկի մեջ և քննարկվել են Լոնդոնում կայացած «Ուսուցանողների ուսուցանում» ծրագրի ընթացքում: Յուրաքանչյուր սեմինարի ժամանակ քննարկվող գործերի նյութերը պատճենահանվել և տրամադրվել են մասնակիցներին և դիտորդներին:
- Ս Իրավաբանների համար մի շարք այլ կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը «1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի՝ 1952 թվականի մարտի 20-ին Փարիզում ստորագրված արձանագրությունում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի՝ 1963 թվականի սեպտեմբերի 16-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների ապահովման մասին, որոնք այլ են, քան կոնվենցիայի և դրան կից թիվ առաջին արձանագրության մեջ արդեն ընդգրկվածները» թիվ 4 արձանագրությունում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի՝ 1984 թվականի նոյեմբերի 22-ին Ստրասբուրգում ստորագրված թիվ 7 արձանագրությունում անրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու

